ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5, հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ
unibank@unibank.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 27, 19 հունվարի 2017

Արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս

Արժեթղթերի քանակը՝ 158,923,776 հատ

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 100 ՀՀ դրամ

Ստորագրող անձինք՝ (ստորագրություն ամսաթիվ)

| | | | |
|---|---|---|---|
| Զաքար Բոյաջյան | Վարչության նախագահի առաջին տեղակալ – Ռիսկերի կառավարման տնօրեն | | 19.01.17թ. |
| Գոհար Գրիգորյան | Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ | | 19.01.17թ. |
| Օվսաննա Առաքելյան | Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն | | 19.01.17թ. |
| Մեսրոպ Հակոբյան | Վարչության նախագահի տեղակալ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի գծով տնօրեն | | 19.01.17թ. |
| Դավիթ Պետրոսյան | Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն | | 19.01.17թ. |
| Գուրգեն Ղուկասյան | Վարչության նախագահի տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն | | 19.01.17թ. |

Տեղեկություններ <<Յունիբանկ>> ԲԲԸ Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ:

18.01.2017թ. <<Յունիբանկ>> ԲԲԸ Բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

- Համալրել «Յունիբանկ» ԲԲԸ ընդհանուր կապիտալը 3,211,432,270 ՀՀ դրամով՝ Բանկի թվով 13,962,749 հատ սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման արդյունքում (արժեթղթերի անվանական արժեքը՝ 100 ՀՀ դրամ, տեղաբաշխման արժեքը՝ 230 ՀՀ դրամ), որից 1,396,274,900 ՀՀ դրամն ուղղել Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրմանը, իսկ 1,815,157,370 ՀՀ դրամը ձևակերպել որպես էմիսիոն եկամուտ:
- Հաստատել «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրական հիմնադրամը 20,489,652,500 ՀՀ դրամ:
- Հաստատել «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրությունը նոր խմբագրությամբ, այն ներկայացնել գրանցման ՀՀ ԿԲ՝ համաձայն ՀՀ ԿԲ Խորհրդի «Կանոնակարգ 1»-ի պահանջների: